«ՎԱՎԵՐԱՑՆՈՒՄ ԵՄ»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՔՈՉԱՐՅԱՆ

« 22 » փետրվարի 2001 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 փետրվարի 2001 թվականի № 131

քաղ. Երևան

Գործարարության աջակցման խորհրդի կանոնադրությունը հաստատելու մասին

Հայաստանի Հանրապետության Նախագահի 2000 թվականի դեկտեմբերի 31-ի «Գործարարության աջակցման խորհուրդ ստեղծելու մասին» ՆՀ-768 հրամանագրին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

Հաստատել գործարարության աջակցման խորհրդի կանոնադրությունը (կցվում է):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Lk193

Հաստատված է
ՀՀ կառավարության 2001 թվականի
փետրվարի 22 -ի N 131 որոշմամբ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

գործարարության աջակցման խորհրդի

I. Ընդհանուր դրույթներ

1. Գործարարության աջակցման խորհուրդը (այսուհետև՝ խորհուրդ) ստեղծվել է Հայաստանի Հանրապետությունում գործարարության աջակցման, ներդրումների խթանման և վարչարարական խոչընդոտների վերացման նպատակով, որի կազմը հաստատվում է Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրով:

2. Խորհուրդը խորհրդակցական մարմին է և իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

II. Խորհրդի նպատակները, խնդիրներն ու գործառույթները

3. Խորհրդի գործունեության հիմնական նպատակն է Հայաստանի Հանրապետությունում ներդրումների և գործարարության համար բարենպաստ մթնոլորտի ապահովումը:

4. Խորհրդի խնդիրներն են՝

ա) ներդրումների խթանումը և գործարարությանն օժանդակումը.

բ) ներդրումներին և գործարարությանն առնչվող վարչարարական խոչընդոտների վերացմանն ուղղված միջոցառումների մշակումը.

գ) գործարարների և պետական մարմինների միջև փոխհարաբերությունների համակարգումը, արդյունավետ համագործակցության մեխանիզմի ստեղծումը.

դ) Հայաստանի Հանրապետության տնտեսական քաղաքականության մշակմանը գործարարների մասնակցության ապահովումը.

Lk193

ե) ներդրումները և գործարար միջավայրը կարգավորող բարենպաստ օրենսդրական դաշտի ձևավորմանն օժանդակումը:

III. Խորհրդի աշխատանքների կազմակերպումը

5. Խորհուրդն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով, որոնք գումարվում են առնվազն ամիսը մեկ անգամ, ինչպես նաև արտահերթ նիստերի՝ սույն կանոնադրությամբ սահմանված կարգով: Խորհրդի նիստերն արձանագրվում են:

6. Խորհուրդն իր արտահերթ նիստերը գումարում է իր գործունեության ընթացքում առաջացած հարցերի և խնդիրների լուծման համար՝ խորհրդի նախագահի նախաձեռնությամբ կամ խորհրդի անդամների առնվազն 1/3-ի առաջարկությամբ:

7. Խորհրդի նիստն իրավազոր է որոշումներ կայացնելու, եթե դրան մասնակցում է խորհրդի անդամների կեսից ավելին:

8. Խորհրդի նիստը վարում է խորհրդի նախագահը, իսկ նախագահի բացակայության դեպքում՝ խորհրդի փոխնախագահը: Խորհրդի որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում խորհրդի նախագահի ձայնը վճռորոշ է:

9. Խորհրդի նիստի օրակարգը հաստատվում է ընթացիկ նիստում, որը համապատասխան փաստաթղթերով տրամադրվում է խորհրդի անդամներին և 12-րդ կետում նշված անձանց՝ գումարվող խորհրդի նիստից 3 օր առաջ: Խորհրդի յուրաքանչյուր անդամ իրավասու է նիստից առնվազն 5 օր առաջ քարտուղարություն ներկայացնել օրակարգում հարց ընդգրկելու վերաբերյալ առաջարկություն:

10. Յուրաքանչյուր նիստ սկսվում է նիստի օրակարգի և նախորդ նիստում ընդունված որոշումների կատարման ընթացքի մասին զեկուցմամբ:

11. Խորհրդի ընդունած որոշումներն ու արձանագրություններն ստորագրում են խորհրդի նախագահը և քարտուղարը:

12. Խորհրդի նիստերին խորհրդատվական ձայնի իրավունքով կարող են մասնակցել հրավիրված պետական պաշտոնյաներ և օրակարգի հարցերին առնչվող համապատասխան կազմակերպությունների ներկայացուցիչներ:

13. Ռոտացիոն կարգով խորհրդի կազմում ընդգրկված գործարարները կարող են 9-րդ կետում սահմանված կարգով, խորհրդի քարտուղարության միջոցով, խորհրդի նիստի օրակարգում ընդգրկել իրենց առաջարկությունները:

14. Խորհուրդն ստեղծում է աշխատանքային խմբեր՝ խորհրդի որոշումների իրականացման, նիստերի միջև ընկած ժամանակահատվածում խորհրդի ընթացիկ գործերի կատարման համար:

15. Խորհուրդն իր աշխատանքները կազմակերպելու համար կարող է Հայաստանի Հանրապետության նախարարություններից, գերատեսչություններից, պետական կառավարման տարածքային մարմիններից և կազմակերպություններից ստանալ վերլուծական ու տեղեկատվական նյութեր, վիճակագրական տվյալներ:

16. Խորհուրդն իր որոշումներին համապատասխան կարող է առաջարկություններ ներկայացնել Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների քննարկմանը:

IV. Խորհրդի նախագահը և փոխնախագահը

17. Խորհրդի նախագահը Հայաստանի Հանրապետության վարչապետն է:

18. Խորհրդի նախագահը՝

ա) հրավիրում և նախագահում է խորհրդի նիստերը.

բ) պատասխանատու է խորհրդի աշխատանքների արդյունավետ իրականացումը կազմակերպելու համար.

գ) ներկայացնում է խորհուրդը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում:

19. Խորհրդի փոխնախագահը՝

ա) փոխարինում է խորհրդի նախագահին՝ նրա բացակայության ժամանակ.

բ) օժանդակում է խորհրդի նախագահին՝ խորհրդի աշխատանքների իրականացման ընթացքում:

V. Խորհրդի անդամները

20. Խորհրդի գործարար համայնքից անդամների անհատական կազմը ձևավորվում է ռոտացիոն կարգով՝ Հայաստանի Հանրապետության Նախագահի 2000 թվականի դեկտեմբերի 31-ի «Գործարարության աջակցման խորհուրդ ստեղծելու մասին» ՆՀ - 768 հրամանագրի N 2 հավելվածում նշված գործարարների ցանկից: Ռոտացիան կատարվում է կիսամյակը մեկ անգամ՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ:

21. Խորհրդի այն անդամը, որը համաձայն չէ խորհրդի ընդունած որոշմանը, ներկայացնում է իր գրավոր հատուկ կարծիքը, որը կցվում է որոշմանը և գրառվում խորհրդի նիստի արձանագրության մեջ:

22. Խորհրդի անդամի պարտականությունները կարող են դադարեցվել Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրով, իսկ ռոտացիայի կարգով ընդգրկվածներինը՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ:

VI. Խորհրդի քարտուղարությունը

23. Խորհրդի աշխատանքային քարտուղարությունը հանդիսանում է «Զարգացման հայկական գործակալություն» փակ բաժնետիրական ընկերությունը՝ որն իր կազմից ձևավորում է խորհրդի քարտուղարության աշխատանքային խումբը:

24. Խորհրդի քարտուղարությունը՝

ա) նախապատրաստում է խորհրդի նիստերն ու օրակարգին վերաբերող համապատասխան նյութերը և կազմակերպում նյութերի տրամադրումը խորհրդի անդամներին.

բ) հետևում է խորհրդի որոշումների կատարմանը.

գ) խորհրդին ներկայացնում է առաջարկներ՝ Հայաստանի Հանրապետությունում ներդրումների խթանման և վարչարարական խոչընդոտների վերացման հարցերի վերաբերյալ.

դ) ապահովում է խորհրդի գործունեության ու արդյունքների վերաբերյալ հրապարակային տեղեկատվությունը.

ե) տեղեկատվություն է տրամադրում պետական նշանակության ծրագրային միջոցառումների, կատարվող և կատարվելիք աշխատանքների վերաբերյալ.

զ) արձանագրում է խորհրդի նիստերի քննարկումները և դրանց հիման վրա կազմում որոշման համապատասխան նախագծեր.

է) գրանցում է խորհրդի անդամների ներկայացրած գրավոր հատուկ կարծիքները.

ը) խորհրդի որոշումները և նիստերի արձանագրություններն ուղարկում է համապատասխան նախարարություններ և գերատեսչություններ:

VII. Խորհրդի քարտուղարը

25. Խորհրդի քարտուղարը «Զարգացման հայկական գործակալություն» փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրենն է:

26. Խորհրդի քարտուղարը՝

ա) կազմակերպում է խորհրդի քարտուղարության աշխատանքները.

բ) խորհրդի նիստում զեկուցում է խորհրդի որոշումների կատարման ընթացքի մասին:

VIII. Խորհրդի գործունեության դադարումը

27. Խորհրդի գործունեությունը դադարում է Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրով: